

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 151

Առարկութիւններ նախասահմանութեան Վերակազմ վարդապետութեան դէմ –Նախասահմանութեան Վերակազմ վարդապետութեան հակառակ եղած ամենամեծ առարկութիւնը այն է որ այդ աչառ է, ներկայացնելով մի Աստուած որն տարբերութիւն է դնում մարդկանց միջեւ՝ ցոյց տալով շնորհք ոմանց բայց ոչ ուրիշներին, պատճառելով որ ոմանք փրկեն իսկ ուղարկելով ուրիշներին դժոխք: Արմենական տեսանկիւնում Աստուած ընտրում է մարդկանց Իր նախագիտութեան հիման վրայ՝ թէ մարդիկ ինչպէս կ'պատասխանեն անտիսի պատգամը երբ լսեն այդ ապագայում. եւ ուստի նրանց կարծիքում Աստուած մնում է արդար եւ անաչառ:

Հիմա եթէ Հռովմայեցի 9ում Պօղոսը նախասահմանութեան Արմենական տեսանկիւնն էր ուսուցանում ապա մենք պիտի ակնկալէինք ոչ մի առարկութիւն, քանի որ ոչ ոք պիտի հարցաքննէր Աստուծոյ անաչառութիւնը կամ արդարութիւնը՝ որովհետեւ այդ տեսանկիւնում Աստուած պիտի փրկէր նրանց որոնք Յիսուսին կ'հաւատային: Բայց այդ չէ այդ ինչ որ գտնում ենք Հռովմայեցի 9ում: Աստուծոյ Յակոբի սիրելը եւ Եսայի ատելը նշելուց յետոյ, 14րդ համարում Պօղոսը հարցնում է թէ՛ «Հիմա ի՞նչ ասենք. մի՞թէ Աստուծոյ մօտ անիրաւութիւն կայ»: Ինչո՞ւ պիտի Պօղոսը հարցնէր այս հարցումը: Պօղոսը պարզապէս ակնկալում էր բողոքներ կամ առարկութիւններ իր ընթերցողներին կամ նոյնիսկ իր հակառակորդներին իր Աստուծոյ գերիշխանութեան եւ Նրա ընտրութեան անպայմանական բնութեան ուսուցման դէմ. հենց նոյն հարցումները որ Քրիստոնեաների մեծ մասը հարցնում են այս օր այս վարդապետութեան դէմ:

Ուրիշ ինչո՞ւ համար պիտի Պօղոսը հարցնէր այսպէս մի հարցում: Ո՞վ պիտի ասէր թէ անարդարութիւն կայ Աստուծոյ մէջ, կամ թէ Նրա որոշումը աչառ է, եթէ Պօղոսը ուսուցանում էր որ Աստուած ընտրում է մարդկանց նախատեսած որոշման կամ հաւատքի հիման վրայ: Բայց Աստուծոյ արդարութեան հարցը միշտ յառաջանում է Վերակազմ տեսանկիւնի դէմ, քանի որ թուում է թէ Աստուած վարում է մարդկանց հետ աչառութեամբ: Ուրեմն արդե՞օք անարդարութիւն կայ Աստուծոյ մէջ: Պօղոսը ուժգինօրէն ասում է՝ «Ոչ երբեք»:

Երբ մարդիկ ասում են որ Աստուած անարդար կամ աչառ է, նրանք իրականում ասում են որ փրկութեան նկատմամբ Աստուած պիտի վարի ամենի հետ հաւասարապէս. բայց այդ մի հակասութեամբ զաղափար է: Նախ, Աստուած չի վարում անմեղ մարդկանց հետ, իսկ Նա վարում է մեղաւոր մարդ արարածների հետ՝ մեռած իրենց մեղքերումը եւ յանցանքներումը, եւ բնութեամբ բարկութեան որդիք, որոնք բոլորը Աստուծոյ բարկութեան եւ պատժի արժանի են (Ծննդոց 6:5, Մաղմուս 14:3, Հռովմայեցի 3:9-18, Եփեսացի 2:1-3): Երկրորդ, ըստ սահմանումը, շնորհք մի անարժան, անշահ եւ կամաւոր բարիք է, այդ մի պարզապէս է (նւէր է), եւ ոչ պարտադրական մի բան: Ոչ մի մեղաւոր արժանի է շնորհքի, եթէ ոչ շնորհքը այլեւս շնորհք չի լինի (Հռովմայեցի 11:6): Այդ Աստուծոյ գերիշխան ու բացարձակ իրաւունքն է նւիրել շնորհք ումին որ Նա կամենում է (Հռովմայեցի 9:15-16, 18): Երրորդ, դատապարտեալների վերաբերեալ, Աստուած երկնքից չի ետ պահում կամ արգելում անձերին որոնք փափաքում են լինել Աստուծոյ հետ. այլ նրանք բոլորը մեղաւոր մարդիկ են՝ որոնք իրականում ասում են Աստուծուն, եւ սիրում են իրենց մեղքերը, եւ փափաքում են լինել Աստուծոց ու Նրա սրբութիւնից իխիստ հեռու (Հռովմայեցի 1:18-32, Յայտնութիւն 22:11): Ուստի Նա յանձնում է նրանց հենց իրենց՝ որպէսզի լինել եւ անել այդ ինչ որ ցանկանում են:

Ար Սի Սփրոլը բացատրում է նախասահմանութիւնը օգտագործելով արդարութեան եւ ոչ-արդարութեան դասակարգերը՝ ուր ոչ-արդարութիւնը բովանդակում է ողորմութիւն եւ անարդարութիւն: Բոլոր մեղաւորներ արժանի են արդարութեան՝ այսինքն յախտենական դժոխք: Եւ ըստ Իր յախտենական հրովարտակը այս է այդ ինչ որ Աստուած որոշել է անելու որոշ մեղաւորների հետ: Սակայն, ուրիշ մեղաւորներ չեն ստանում Աստուծոյ արդարութիւնը այլ ստանում են Նրա ողորմութիւնը, եւ ուստի փրկում են: Աստուած տալիս է ողորմութիւն այս մեղաւորներին՝ որը ոչ-արդարութիւն է: Այսպիսով ոմանք արդարութիւն են ստանում եւ ուրիշները ողորմութիւն, իսկ ոչ ոք անարդարութիւն է ստանում:

Հռովմայեցի 9:19ում Պօղոսը ներկայացնում է եւս մի ուրիշ հարց՝ որը նա ակնկալում է որ իր ընթերցողները կ'հարցնեն, ասելով թէ՛ «Ապա ինձ կ'ասես, էլ ի՞նչու է մեղադրում. Նրա կամքին ո՞վ հակառակ կ'կենայ»: Այսպէս մարդիկ հարցաքննում են Աստուծոյ արդարութիւնը, եւ իրականում մեղադրում են Նրան ոչ-ընտրեալների անհաւատութեան համար: Պօղոսը ունի շատ կոշտ եւ կտրուկ բառեր այսպէս մարդկանց համար, ասելով թէ՛ «Բայց դու ո՞վ ես, մարդ, որ Աստուծուն դէմ պատասխան ես տալիս. Մի՞թէ ստեղծուածը կ'ասէ իր ստեղծողին թէ՛ ի՞նչու այդպէս արիւր ինձ» (համար 20): Սրանով Պօղոսը յանդիմանում է մեղաւոր մարդուն, ցուցադրելով նրա գերագոյն գոռոզութիւնը եւ անարգանքը հարցաքննելով Աստուծուն (Յոր 38:1-3, 40:1-8, 42:1-6):

Պէտք է մեզ միշտ յիշել թէ ով է Աստուած եւ ով ենք մենք: Աստուածաշունչը չի տալիս մեզ Աստուծոյ գերիշխան կամքի վերաբերեալ եղած բոլոր պատասխանները, ուստի այդ մնում է մեզի որպէս մի խորհուրդ: Եւ թէպէտ մենք կարող ենք Աստուծոց հարցնել այսպէս բաների մասին, սակայն զգոյշ պիտի լինենք հարցնելու պատշաճ եւ յարգալից կերպով, երբեք մեղքի կամ անարդարութեան չմեղադրելու Աստուծուն, կամ էլ չ'պահանջելու մեզի բաւարար պատասխաններ: Այսպէս անելով կատարում ենք հայիոյանք Տիրոջը դէմ: